ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հոդվածի հղումը. Գալստյան Հ., Շահինյան Մ., Ծատրյան Կ., Գուրուրյան Գ. (2024), ՀՀ մարզերում ներդրումների ներգրավման հիմնական խոչընդոտները և հնարավորությունները (Սյունիքի և Տավուշի մարզերի օրինակներով), *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ,* 3*(6),* 123-146,
DOI: 10.52174/29538114_2024.3-123
Ներկայացվել է խմբագրություն՝ 20.11.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 24.11.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 30.12.2024 թ.

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0001-9014-5892

ՄՀԵՐ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության Քաղաքականության վարչության տնտեսական գոտիների և ենթակառուցվածքների զարգացման բաժնի պետ
https://orcid.org/0000-0001-5692-5238

ԿԱՏՐԻՆ ԾԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ մագիստրանտ
https://orcid.org/0009-0003-4213-8526

ԳՐԵՏԱ ԳՈՒՐՈՒՐՅԱՆ
ՀՊՏՀ մագիստրանտ
https://orcid.org/0009-0006-5946-8996

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(Սյունիքի և Տավուշի մարզերի օրինակով)

Տարածքային միավորների ներդրումային գրավչության գնահատումը ներդրումային գրավչության բարելավմանն ուղղված քաղաքականության և ծրագրերի հիմքն է, ինչը ենթադրում է, որ գործնականում գրեթե անհնար է մշակել և իրագործել որևէ արդյունավետ ծրագիր կամ քաղաքականություն՝ առանց ներդրումային գրավչության խոչընդոտների բացահայտման: Ինքնին հասկանալի է, որ ՀՀ-ում, ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համատեքստում, անհրաժեշտություն

է առաջանում ՀՀ յուրաքանչյուր մարզի համար իրականացնելու նման գնահատումներ: Սույն վերլուծության շրջանակներում կատարվել է ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի ներդրումային գրավչության գնահատումը: Վերլուծության հիմնական արդյունքների համադրման միջոցով յուրաքանչյուր մարզի համար ներկայացվել են ներդրումային գրավչության բարելավման ուղիներ՝ հիմնված մարզի ներդրումային գրավչության նկարագրության և դրանից բխող առաջարկների վրա: Մարզերի նկարագրությունը և առաջարկները կառուցված են ըստ այդ մարզերի ներդրումային գրավչությունը ձևավորող համապատասխան բլոկների:

Հիմնաբառեր. *ներդրումային գրավչություն, մարզեր, սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, SVOT վերլուծություն, բարելավման ուղիներ*

JEL: O18, P25, R58

DOI: 10.52174/29538114_2024.3-123

Ներածություն: Յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգում տնտեսական կայուն աճի և երկարաժամկետ զարգացման հիմքը երկրում կատարվող ներդրումներն են, իսկ տարածքային միավորների ներդրումային գրավչության գնահատումը ներդրումային գրավչության բարելավմանն ուղղված քաղաքականության և ծրագրերի հիմքն է, ինչը ենթադրում է, որ գործնականում գրեթե անհնար է մշակել և իրագործել որևէ արդյունավետ ծրագիր կամ քաղաքականություն՝ առանց ներդրումային գրավչության խոչընդոտների բացահայտման:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Տավուշի մարզերի զարգացման առանձնահատուկ ներուժը և կարևորությունը թե՛ տնտեսական, թե՛ անվտանգային համատեքստում, հարկ է գնահատել այդ մարզերում առկա ներդրումային գրավչության հիմնական խնդիրները, ինչպես նաև առաջարկել դրանց բարելավման ուղիները:

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում ներդրումների ներգրավման հիմնական խոչընդոտներն ու հնարավորությունները՝ հիմնվելով տարածքային միավորներում ներդրումային գրավչության գործոնների և մակրոտնտեսական ցուցանիշների համադրման արդյունքում ներդրումային գրավչության և ներդրումային ռիսկերի գնահատման վրա:

Վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ ներդրումների դինամիկան էապես տարբերվում է՝ պայմանավորված մարզերի ռեսուրսային և աշխարհագրական առանձնահատկություններով:

ՀՀ մարզերից ներդրումային զուտ հոսքերի բարձր ցուցանիշներով աչքի է ընկնում Սյունիքը (2023 թ.՝ 9335.3 միլիոն դրամ), որին հաջորդում է Կոտայքի մարզը: Մյուս մարզերում ներդրումները կամ բացակայում են, կամ անբավարար են (Տավուշի մարզում 2023 թ.՝ -4497.2 միլիոն դրամ[1]): Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, այս ցուցանիշով ևս Սյունիքը և Տավուշը հակադիր ուղղությամբ են շարժվում (2023 թ.՝ 36 577.0 և -3 884.9 միլիոն դրամ համապատասխանաբար):

Վերլուծության արդյունքները թույլ են տվել բացահայտել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում ներդրում-

[1] Տե՛ս ՀՀ ՎԿ, օտարերկրյա ընդամենը և ուղղակի ներդրումների զուտ հոսքերը, https://armstat.am/file/article/marzer_2024_14.pdf

ների ներգրավման առումով: Դրանք տարաբնույթ են՝ սկսած համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունից մինչև բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պակաս, ինչպես նաև մարզերում ներդրումային քաղաքականության մշակման և կենսագործման հստակ գործիքակազմերի բացակայություն: Արդյունքում՝ ոլորտի խնդիրները հաճախ քողարկված են մնում՝ խզում առաջացնելով պետական և տեղական մակարդակներում մշակվող քաղաքականությունների միջև:

Գրականության ակնարկ: Տնտեսագետների շրջանում չկա միասնական կարծիք կամ համաձայնություն ներդրումային գրավչության սահմանման և գնահատման վերաբերյալ: Ներդրումային գրավչության սահմանման և գնահատման հարցում տարբեր տնտեսագետների և հետազոտական կառույցների տեսակետները երբեմն տարբեր են, բայց դրանք փոխլրացնում են միմյանց՝ արտացոլելով տարբեր մոտեցումներ և շեշտադրումներ:

Ներդրումային գրավչությունը գնահատելիս տնտեսական համակարգերի աստիճանակարգային մակարդակների միջև կապը մեծապես որոշվում է տնտեսական գործունեության տեսակի ներդրումային գրավչությամբ: Իր հերթին, գործում է նաև հետադարձ կապի սկզբունքը. առանձին կազմակերպության ներդրումային գրավչությունը հիմնականում որոշում է դրա գործունեության տեսակի ներդրումային գրավչությունը: Որոշակի վայրում տեղակայված կազմակերպությունների ներդրումային գրավչությունն էական ազդեցություն ունի տվյալ տարածքի ներդրումային գրավչության վրա՝ որպես ամբողջություն, իսկ երկրի տնտեսության ներդրումային գրավչությունը ձևավորվում է առանձին հատվածների գրավչությունից[2]: Ըստ մեկ այլ սահմանման՝ ձեռնարկության ներդրումային գրավչությունը դրանում անվճար միջոցներ ներդնելու իրագործելիությունն է[3]:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման խոչընդոտների և հնարավորությունների բացահայտման վերաբերյալ մի շարք վերլուծություններ են իրականացվել Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, միջազգային այլ հեղինակավոր կառույցների, տարբեր երկրների տնտեսագետների, գիտնականների, փորձագետների կողմից:

Ն. Կրեսպոյի և Մ. Ֆոնտուրայի հետազոտության մեջ, գնահատելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը երկրների տնտեսությունների վրա, նշվում է, որ ներդրումների ազդեցությունները միշտ չէ, որ դրական են և կախված են տարբեր գործոններից, ինչպիսիք են ՕՈՒՆ-ի մուտքի ռեժիմը, ինչպես նաև օտարերկրյա և ներքին ընկերությունների բնութագրերը, տնտեսության կառուցվածքը, ներդրման ոլորտը և գործող ֆիրմաները[4]:

Դ. Քլարկը, Ջ. Հեյգֆիլը և Ս. Ռեհմանը, ուսումնասիրելով հյուրընկալող երկրներում ՕՈՒՆ-ի ազդեցությունը տնտեսական աճի վրա, դրական ազդե-

---

[2] Տե՛ս Сущность инвестиционной привлекательности как экономической категории. О некоторых вопросах и проблемах экономики и менеджмента, Дмитриева О.В./ Сборник научных трудов по итогам международной научно-практической конференции, № 3, Красноярск, 2016, 264 էջ:

[3] Տե՛ս **Адрианов Д.В.,** Россия: экономический и инвестиционный потенциал. М., «Экономика», 2015, էջ 316:

[4] Տե՛ս Determinant Factors of FDI Spillovers – What Do We Really Know?, Nuno Crespo, Maria Paula Fontoura, 2007, Volume 35, Issue 3, March 2007, էջ 410-425, https://doi.org/10.1016/j.worlddev.2006.04.001

ցություններից առանձնացրել են տեխնոլոգիական առաջադիմությունը, տնտեսական աճը և եկամուտների աճող անհավասարությունն ընդունող երկրներում[5]:

Տարածական զարգացման քաղաքականությունը դարձել է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական տնտեսագիտության հետազոտության առարկան: Հայրենական տնտեսագիտության մեջ հետազոտություններ են կատարվել տարածաշրջանների, մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական համալիր զարգացման, վարչատարածքային բաժանման, տարած-քային կառավարման բարելավման ուղղություններով: Ուսումնասիրվել են նաև հայազգի հեղինակների կողմից ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ներդրումային գրավչության բարձրացմանը և դրա հետ կապված հիմնախնդիրներին վերաբերող մի շարք հետազոտություններ:

«Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» հետազոտության մեջ նշվում է տարածքային զարգացման առումով հիմնական բացը՝ ՀՀ տարածքային ոչ համաչափ զարգացումը, և թեև մշակվել ու իրականացվել են տարբեր սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, այդուհանդերձ, զարգացման անհամաչափությունները խորացել են[6]:

«ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համալիր զարգացման տեսլականը» հետազոտության մեջ, գնահատելով նշված մարզերի ներդրումային գրավչությունը, կարևորվում է մարզերի համալիր զարգացման հնարավորությունը, քանի որ երկու մարզում էլ առկա է զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացման ներուժ[7]: Սյունիքի և Վայոց ձորի մարզերի տնտեսական ներուժի մակարդակի բարձրացման և ՀՀ տարածաշրջանային տնտեսաքաղաքական դիրքերի ամրապնդման համար շեշտվում է տվյալ մարզերի տարածաշրջանային տնտեսական բևեռների, տարածական կառավարման նոր մոտեցումների կիրարկման անհրաժեշտությունը, ինչպես նաև համալիր զարգացման ծրագրերի մշակման կարևորությունը՝ գործարար և ագրոզբոսաշրջային ենթակառուցվածքների կատարելագործման համար:

«ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը» հետազոտության մեջ ուսումնասիրվել և բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից են գյուղատնտեսական, մասնավորապես՝ բուսաբուծության համախառն արտադրանքի աճի տեմպի անկումը, աշխատանքի արտադրողականություն–աշխատավարձի աճերի տարբերությունները, քաղաքային համայնքներում զբաղվածության ցածր մակարդակը, ինչպես նաև գյու-

---

[5] Տե՛ս **Clark D. P., Hihgfill J., De O., Campino J., & Rehman S. S.** (2011). FDI, technology spillovers, growth, and income inequality: A selective survey. Global Economy Journal, 11(2), էջ 1-44, https://doi.org/10.2202/1524-5861.1773

[6] Տե՛ս Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները / Ծրագրի գիտական ղեկավար՝ Ի.Տ. Տիգրանյան, կատարողներ՝ Ք.Ջ. Վարդանյան, Գ.Ա. Ավագյան, Կ.Հ. Գրիգորյան, Վ.Ի. Տիգրանյան, Եր., «Տնտեսագետ», 2014, 80 էջ, https://asue.am/upload/files/ner-git_dram_Tigranyan.pdf

[7] Տե՛ս ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համալիր զարգացման տեսլականը / Ս. Խաչիկյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2022, 94 էջ («Ամբերդ» մատենաշար 58, https://www.researchgate.net/profile/Armen-Ghazaryan-3/publication/385909964_Amberd-58pdf/data/673b7cddb903016a31c3d036/Amberd-58.pdf?origin=scientificContributions

ղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ցածր մակարդակը, գյուղատնտեսության ոլորտում ցածր եկամտաբերությունը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային խնդիրները և այլն[8]:

Ուսումնասիրելով կատարված հետազոտությունները՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ մարզերն ունեն սոցիալ-տնտեսական զարգացման ներուժ, որը, սակայն, մի շարք պատճառներով (այդ թվում՝ մարդկային կապիտալի և ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների), ամբողջապես չի իրացվում:

Է. Աղաբեկյանն իր «Ընկերությունների շահույթն ու վնասը, կամ թե ինչն է խանգարում օտարերկրյա ներդրողներին ներդնել Հայաստանում»[9] աշխատությունում ՀՀ տնտեսությունում ներդրումների գրավչության բարձրացման համատեքստում շեշտադրում է կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման, սպառման շուկաների մեծացման, օգտագործվող կապիտալի ու ակտիվների արտադրողականության բարձրացման կարևորությունը, ինչը համընդգրկուն ու խորքային կառավարման քաղաքականություն է պահանջում:

«Էնթերփրայզ Արմենիան»՝ ՀՀ-ում ներդրումների աջակցման կենտրոնը, ՀՀ-ում ներդրումային ծրագրերի արդյունավետ կարգավորման ու իրականացման տեսանկյունից կարևորում է օտարերկրյա կապիտալի մասնակցության սահմանափակումների բացակայությունը, օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների նկատմամբ համահավասար վերաբերմունքը, ներդրումների իրականացման ոլորտային և աշխարհագրական սահմանափակումների բացակայությունը, ինչպես նաև օտարերկրացիների կողմից Հայաստանում գրանցված իրավաբանական անձանց սեփականության իրավունքով անշարժ գույք կամ երկարաժամկետ վարձակալության պայմանագրեր ձեռք բերելու և ունենալու հնարավորությունը[10]:

Այսպիսով՝ ամփոփելով ներդրումային գրավչության վերաբերյալ ուսումնասիրված գրականությունը, կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի ազդեցությունները միշտ չէ, որ դրական են և կախված են ընդունող երկրի տնտեսական կառուցվածքից, ներդրումային ոլորտից, շուկա մուտքի ռեժիմից և ներքին առանձնահատկություններից: Մի կողմից՝ ներդրումները կարող են նպաստել տեխնոլոգիական առաջադիմությանը, տնտեսական աճին և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝ օտարերկրյա ներդրումները կարող են սահմանափակել տեղական ընկերությունների աճը որոշ ոլորտներում և առաջացնել եկամուտների անհավասարություն: Ներդրումային գրավչության գնահատումը պահանջում է համապարփակ մոտեցում, որը ներառում է ինչպես ինստիտուցիոնալ, տնտեսական, այնպես էլ կարգավորող գործոններ:

---

[8] Տե՛ս ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը / Զ. Թադևոսյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2020, 193 էջ («Ամբերդ» մատենաշար), https://library.asue.am/open/Amberd_lori.pdf?fbclid=IwAR3nDwavM8Yohk-kAZMGv9jm5TYQmlOk3ZtjGSv7OwVrQVwV-PmuRZCWhQ

[9] Տե՛ս Ընկերությունների շահույթն ու վնասը, կամ թե ինչն է խանգարում օտարերկրյա ներդրողներին ներդնել Հայաստանում, ՀՊՏՀ, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Վերլուծականներ, https://asue.am/amberd/publications/analytics/profit-loss-companies-prevents-foreign-investors

[10] Տե՛ս ENTERPRISEARMENIA, Ներդրումային օրենսդրություն, https://enterprisearmenia.am/hy/why-armenia/investment-legislation/

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար որպես տեսական և տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Կառավարության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերը, պարբերաբար հրապարակվող հաշվետվությունները և հոդվածները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռազմավարական ծրագրերը, նախագծերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վիճակագրական տեղեկագրերը, տարեգրքերը, տվյալների շտեմարանները, վիճակագրական հետազոտություններ իրակա-նացնող տարբեր կազմակերպությունների կողմից պարբերաբար հրապարակվող հաշվետվություններն ու զեկույցները, մարզերի աշխատակազմի կողմից հրապարակվող հաշվետվությունները, համայնքների զարգացման ծրագրերը, հիմնախնդրով զբաղվող հայ և օտարերկրացի հեղինակների աշխատությունները, գիտական ամսագրերում հրապարակված հոդվածները:

ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի ներդրումային գրավչության բարելավման հիմնական ուղղությունները պատկերացնելու համար նախ ուսումնասիրվել են Սյունիքի և Տավուշի մարզերի ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված ռազմավարությունների, քաղաքականությունների շրջանակի, ենթակառուցվածքների առկա վիճակը, ներդրումների ներգրավմանն ուղղված բարեփոխումների շրջանակը: Այնուհետև քանակական և համեմատական վերլուծության միջոցով ուսումնասիրվել և վերլուծվել են մարզերի ՀՆԱ, արդյունաբերության և ծառայությունների ոլորտների տեսակարար կշիռների, արդյունաբերական թափոնների և միգրացիոն հոսքերի քանակական տվյալները, որոնք գրաֆիկական մեթոդի կիրարկմամբ ներկայացվել են տարբեր աղյուսակների և գծապատկերների տեսքով:

Ուսումնասիրելով ՀՀ Կառավարության, ինչպես նաև մարզերի համայնքների զարգացման ռազմավարական ծրագրերը՝ SVOT վերլուծության (ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ) միջոցով նախանշվել են ներդրումների ներգրավմանը նպաստող արտաքին և ներքին միջավայրի հիմնական գործոնները: SVOT գործիքակազմի միջոցով որակական գնահատումներ են իրականացվել Սյունիքի և Տավուշի մարզերի ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև մարտահրավերները բացահայտելու նպատակով: Հարկ է նշել նաև, որ վերլուծության ընթացքում մարզերի SVOT-ն իրականացնելիս դրանք միավորվել են՝ ըստ անվտանգային ռիսկերի, լոգիստիկ հնարավորությունների նախադրյալների, ինչպես նաև ներդրումների ներգրավման համանման մեկնարկային պայմանների:

SVOT վերլուծության միջոցով տարածքային միավորների ներդրումային գրավչության գնահատումը հիմնված է ներդրումային հնարավորությունների և ներդրումային ռիսկերի գնահատման վրա: Ներդրումային հնարավորությունների գնահատման առանցքում այնպիսի ցուցիչների չափումն է, ինչպիսիք են արտադրական հնարավորությունները, աշխատուժի բնութագրիչները, ֆինանսական հնարավորությունները, սպառման հնարավորությունները, բնառեսուրսային ապահովվածությունը, ենթակառուցվածքների զարգացման մակարդակը, նորարարական հնարավորությունները և զբոսաշրջային ներուժը, իսկ ներդրումային ռիսկերի, ինչպես նաև թույլ կողմերի գնահատումը ենթադրում է ֆինանսական, ենթակառուցվածքային և բնապահպանական խնդիրների գնահատում:

Իրականացնելով խոչընդոտների և հնարավորությունների գնահատում, նշելով յուրաքանչյուրի ազդեցությունը ներդրումային գրավչության վրա՝ որակական գնահատումների միջոցով բացահայտվել են այդ մարզերի ներդրումային գրավչության վրա ազդող արտաքին և ներքին միջավայրի գործոնները՝ շեշտադրում կատարելով այն հիմնական ոլորտների վրա, որոնցում մարզերն ունեն զարգացման իրական ներուժ, և առաջարկվել են ներդրումային գրավչության բարելավման ուղիներ:

Վերլուծություն: Ներդրումների ներգրավման ուղղությամբ ՀՀ-ում որպես գերակա ոլորտներ են ճանաչվել գյուղատնտեսության/սննդի վերամշակման, ալկոհոլային խմիչքների արտադրության, էներգետիկայի, ֆինանսների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության, հանքարդյունաբերության, դեղագործական արդյունաբերության, տեքստիլի, զբոսաշրջության, ինչպես նաև տրանսպորտի ոլորտները:

Ներդրումային գրավչության խոչընդոտները բացահայտելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում որակական գնահատումների միջոցով բացահայտելու այդ մարզերի ներդրումային գրավչության վրա ազդող արտաքին և ներքին միջավայրի գործոնները՝ շեշտադրելով այն հիմնական ոլորտները, որոնց շրջանակում մարզերն ունեն զարգացման իրական ներուժ: Նշվածով պայմանավորված՝ մարզերի ներդրումային գրավչության գնահատումն իրականացվելու է այդ ոլորտների զարգացվածության առաջնահերթության վերլուծության հիման վրա:

Աղյուսակ 1

2022 թվականին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ՀՆԱ բաշխվածության վիճակագրությունը (%)[11]

ՀՀ թիրախային մարզեր և Երևան քաղաք	*ՀՀ ընդհանուր ՀՆԱ-ում մասնաբաժինը*	*ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով՝ ՀՀ միջին ցուցանիշի նկատմամբ*	*ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով՝ ՀՀ միջին ցուցանիշի նկատմամբ*
Երևան	57.4	155.7	208.9
Սյունիք	7.6	165.2	132.00
Տավուշ	1.9	46.8	46.4

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, ՀՀ ընդհանուր ՀՆԱ-ում դիտարկված մարզերից համեմատաբար բարձր ցուցանիշ է ապահովում Սյունիքի մարզը, որն աչքի է ընկնում նաև ՀՀ միջինի համեմատությամբ մեկ բնակչի հաշվով ապահոված ՀՆԱ բարձր մակարդակով: Նշվածով պայմանավորված՝ ստորև փորձենք վերլուծել նաև թիրախային մարզերում տնտեսության տարբեր ոլորտների ցուցանիշները:

Սյունիքի մարզ: Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր տնտեսական ներուժ ունեցող մարզերից մեկը՝ միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսության ոլորտների բազմազանեցման ցածր մակարդակ ունեցող մարզ: Միաժամանակ, մայ-

[11] Աղյուսակի տվյալները հավաքագրվել և ամբողջացվել են հեղինակների կողմից: Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, https://armstat.am/file/article/marzer_2024_5.pdf

րաքաղաքից մեծ հեռավորությունը և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությունը որոշակիորեն սահմանափակում են տնտեսության այլընտրանքային ուղղությունների զարգացումը: Նշենք, որ ՀՀ բնակչության շուրջ 4.5%-ը բնակվում է Սյունիքի մարզում[12]:

Միաժամանակ, մեկ շնչի հաշվով մարզի արդյունաբերական արտադրանքը շուրջ 4 անգամ ավելի է, քան միջին հանրապետական ցուցանիշը, նույնկերպ՝ գյուղատնտեսությունը՝ շուրջ 2 անգամ[13]:

Իսկ առևտուրը և ծառայությունները կազմում են մեկ բնակչի համար հաշվարկված միջին հանրապետական ցուցանիշի համապատասխանաբար՝ 25.8%-ը և 36.6%-ը[14]:

Հարկ է նշել, որ Սյունիքի մարզում տնտեսության ոլորտներից գերակշռող են ***արդյունաբերությունը՝ 18.8%, գյուղատնտեսությունը՝ 6.4%, ինչպես նաև շինարարությունը՝ 8.9%:*** Մարզի արդյունաբերության հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը, ինչի պայմաններում մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ին:

Աղյուսակ 2

ՀՀ Սյունիքի մարզում տնտեսության ոլորտների զարգացման ընդհանուր վիճակը (2022 թ. տվյալներ)[15]

ԱՌԱՋԱՆՑԻԿ ՈԼՈՐՏՆԵՐ			ՀԵՏՆԱՊԱՀ ՈԼՈՐՏՆԵՐ		
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ					
Հանքագործական արդյունաբերություն, մլն դրամ	*Սննդամթերքի արտադրություն, մլն դրամ*	*Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, մլն դրամ*	*Փայտանյութի մշակում, մլն դրամ*	*Կահույքի արտադրություն, մլն դրամ*	*Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն, մլն դրամ*
441156.5	***37480.5***	***29942.5***	***28.9***	***89.4***	***312.6***
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ					
ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ					
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, հազ. տ	*Պտուղ և հատապտուղ, հազ. տ*	*Կարտոֆիլ, հազ. տ*	*Խաղողի տնկարկ, հազ. տ*	*Բոստանային մշակաբույս, հազ. տ*	*Բանջարանոցային մշակաբույս, հազ. տ*
33.4	***14.2***	***12.8***	***0.5***	***0.2***	***5.4***

[12] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրություն / Տվյալների բազաներ / Վիճակագրական տվյալների բազաներ / Ժողովրդագրական տվյալների բազա, https://armstat.am/am/?nid=209

[13] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, https://armstat.am/file/article/marzer_2023_6.pdf

[14] Տե՛ս նույն աղբյուրը:

[15] Աղյուսակի տվյալները հավաքագրել և ամբողջացրել են հեղինակները: Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Արդյունաբերության ոլորտ, https://armstat.am/file/article/marzer_2023_6.pdf, Գյուղատնտեսության ոլորտ՝ https://armstat.am/file/article/marzer_2023_7.pdf, Շինարարության ոլորտ՝ https://armstat.am/file/article/marzer_2023_8.pdf, Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/file/article/marzer_2023_10.pdf

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ					
Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ ոչխար և այծ, 1000 գլուխ	*Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ, խոզեր, 1000 գլուխ*	*Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ, կովեր, 1000 գլուխ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, բուրդ, հազ. տ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, կաթ, հազ. տ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, ձու, մլն հատ*
78.5	***17.3***	***17.7***	***109.1***	***59.2***	***30.5***
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ					
Շինարարություն, մլն դրամ	*Շինմոնտաժային աշխատանքներ, մլն դրամ*	*Հիմնական միջոցների գործարկում, մլն դրամ*	*Շահագործման հանձնված նախադպրոցական հաստատություններ, տեղ*	*Հիվանդանոցներ, մահճակալ*	*Բնակելի շենքերի ընդհանուր մակերես, մ^2*
53351.3	***48709.9***	***14396.8***	***0***	***0***	***2215***
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Ծառայությունների ծավալ, մլն դրամ	*Մանրածախ առևտրի շրջանառություն, մլն դրամ*	*Տրանսպորտ, մլն դրամ*	*Կացություն և հանրային սնունդ, մլն դրամ*	*Տեղեկատվություն և կապ, մլն դրամ*	*Մշակույթ, զվարճություն և հանգիստ, մլն դրամ*
42188.2	***36669.9***	***6459.8***	***2956.3***	***928.0***	***9.8***

Չնայած նրան, որ Սյունիքի մարզը դիտարկվում է որպես ներդրումային հնարավորությունների բարձր գնահատականով ու ցածր ռիսկերով մարզ, այդուհանդերձ, այսպիսի գնահատականը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի հաջողություններով, իսկ այն չի կարող շարունակաբար զարգանալ, քանի որ հանքերի, դրանց շահագործման ու կատարվող ներդրումների շրջանակը սահմանափակ է, հետևապես՝ այս դեպքում ուշադրության պետք է արժանանան այլ ոլորտներ, որտեղ իրավիճակն այնքան էլ բարվոք չէ: Մասնավորապես՝ գյուղատնտեսության զարգացմամբ մարզն էապես զիջում է ՀՀ մյուս մարզերին:

Տավուշի մարզ: Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան մարզը՝ Տավուշը, չնայած օգտակար հանածոներով համեմատաբար աղքատ լինելուն, ՀՀ վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ոլորտներ են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Վերջին տարիներին հիմնվել են պտղատու այգիներ, որոնց մեջ գերակշռում են թուզն ու արքայանարինջը: Տարեցտարի զարգանում է նաև մեղվաբուծությունը: Մարզի տնտեսության առաջատար ոլորտը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը:

Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտահանվում են գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, տեքստիլ արտադրատեսակներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի-Երևան գազատարը: Տավուշի մարզում են գտնվում Այրում-Ջիլիզայի և Բագրատաշենի մաքսակետերը:

Աղյուսակ 3

ՀՀ Տավուշի մարզում տնտեսության ոլորտների զարգացման ընդհանուր վիճակը (2022 թ. տվյալներ)[16]

Առաջանցիկ ոլորտներ			Հետնապահ ոլորտներ		
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ					
Սննդամթերքի արտադրություն, մլն դրամ	*Հագուստի արտադրություն, մլն դրամ*	*Խմիչքի արտադրություն, մլն դրամ*	*Կաշվե իրերի արտադրություն, մլն դրամ*	*Պոլիգրաֆիական գործունեություն, մլն դրամ*	*Մանածագործական արտադրատեսակների արտադրություն, մլն դրամ*
19293.8	***6431.5***	***6040.0***	***7.4***	***30.7***	***25.4***
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ					
ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ					
Պտուղ և հատապտուղ, հազ. տ	*Խաղողի տնկարկ, հազ. տ*	*Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր, հազ. տ*	*Կարտոֆիլ, հազ. տ*	*Բոստանային մշակաբույս, հազ. տ*	*Բանջարանոցային մշակաբույս, հազ. տ*
14.9	***10.6***	***8.5***	***6.4***	***0.5***	***5.9***
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ					
Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ, ոչխար և այծ, 1000 գլուխ	*Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ, խոզեր, 1000 գլուխ*	*Խոշոր եղջերավոր կենդանիների քանակ, կովեր, 1000 գլուխ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, բուրդ, հազ. տ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, կաթ, հազ. տ*	*Անասնաբուծական հիմնական արտադրանք, ձու, մլն հատ*
18.4	***16.6***	***14.0***	***20.7***	***41.6***	***43.4***
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ					
Շինարարություն, մլն դրամ	*Շինմոնտաժային աշխատանքներ, մլն դրամ*	*Հիմնական միջոցների գործարկում, մլն դրամ*	*Շահագործման հանձնված նախադպրոցական հաստատություններ, տեղ*	*Հիվանդանոցներ, մահճակալ*	*Բնակելի շենքերի ընդհանուր մակերես, մ²*
17819.8	***16782.7***	***4894.4***	***0***	***0***	***4379***
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Մանրածախ առևտրի շրջանառություն, մլն դրամ	*Ծառայությունների ծավալ, մլն դրամ*	*Կացություն և հանրային սնունդ, մլն դրամ*	*Տրանսպորտ, մլն դրամ*	*Տեղեկատվություն և կապ, մլն դրամ*	*Մշակույթ, զվարճություն և հանգիստ, մլն դրամ*
41219.3	***24311.3***	***5965.8***	***2178.6***	***789.8***	***192.9***

Միաժամանակ, մարզում խնդրահարույց են սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները: Չնայած նրան, որ մարզն ունի զարգացման հնարավորություններ թե' գյուղատնտեսության և թե' ծառայությունների ոլորտներում, այստեղ 2020-2022 թթ. տվյալներով ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 5%, իսկ աղքատության մակարդակը՝ 37,4% [17]:

Անդրադառնանք նաև թիրախային մարզերում տնտեսության հիմնական հատվածների կառուցվածքային տարբերություններին:

[16] Աղյուսակի տվյալները հավաքագրել և ամբողջացրել են հեղինակները: Տվյալների աղբյուրը նույնն է:

[17] Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf



Գծապատկեր 1. ***2022 թվականին տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում (%)***

Գծապատկեր 1-ի տվյալները ցույց են տալիս, որ դիտարկվող մարզերը գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում ունեն զարգացման ընդգծված տարբերություններ: Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, Սյունիքի մարզն ունի ընդգծված տարբերություն արդյունաբերության զարգացման մասով, որը թույլ է տալիս լինել ոլորտի առաջամարտիկը: Այնուամենայնիվ, ծառայությունների ոլորտը բավականին փոքր մասնաբաժին ունի մարզերի ՀՆԱ ծավալում, ինչը պայմանավորված է տվյալ մարզերում այդ ոլորտների զարգացմանն առաջնահերթություն չտալու հանգամանքով և համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ: Մասնավորապես՝ նկատելի է, որ Սյունիքի մարզում ներկայումս խթանվում է հանքարդյունաբերության զարգացումը, որն իր հերթին առաջ է բերել լուրջ բնապահպանական խնդիրներ: Նշվածով պայմանավորված՝ մարզում կարող են էապես կրճատվել զբոսաշրջության և գյուղատնտեսության բնագավառներում կատարվող ներդրումները:

Աղյուսակ 4

ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում միգրացիոն հոսքերի ծավալները 2020–2022 թթ. (%)[18]

Մարզ	*Մեկնած միգրանտ*	*Վերադարձած միգրանտ*	*Նոր ժամանած միգրանտ*	*Բնակչության բնական աճի տեմպ[19]*
Սյունիք	7.0	5.5	2.8	-9
Տավուշ	4.2	0.4	4.8	-25

[18] Աղյուսակի տվյալները հավաքագրել և ամբողջացրել են հեղինակները: Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Ժողովրդագրական տվյալների բազա, ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները, 2022–2023 թթ., https://armstat.am/am/?nid=209, Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

[19] Բնական աճի տեմպի ցուցանիշները հաշվարկվել են 2021 թվականի տվյալների հիման վրա: Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

Բարենպաստ ներդրումային միջավայրի ներուժի գնահատման համատեքստում խիստ կարևոր է հաշվի առնել նաև մարզերի սոցիալական վիճակը բնութագրող ներկա ցուցանիշները, հատկապես, երբ դրանք կարող են որպես հիմնական ցուցիչ ծառայել մարզում մարդկային կապիտալի շարժի գնահատման տեսանկյունից: Այդպիսի ցուցանիշներից կարող ենք նշել մարզում *միգրացիոն հոսքերի ծավալը, բնական աճի տեմպը* և այլն:

Ինչպես երևում է աղյուսակ 4-ի տվյալներից, թիրախային մարզերում սոցիալական պատկերը խիստ մտահոգիչ է: Բնական աճի տեմպը երկու մարզերում էլ ունի բացասական միտումներ, որտեղ սահմանային հնարավոր լարվածությունների ռիսկը մեծ է: Վերջինս, ցավոք, ուղեկցվում է միգրացիայի աճի մակարդակով, որտեղ ևս վերադարձած և մեկնած միգրանտների տարբերությունները բացասական նշանով են: Հարկ է նշել նաև, որ Սյունիքի մարզը, միգրացիոն հոսքերի ծավալով, առաջինն է ՀՀ-ում: Ինչպես ցույց է տալիս 2020–2022 թթ. միգրացիոն հոսքերի աղյուսակը, մեկնած միգրանտների ամենաբարձր տոկոսը Սյունիքում է՝ 7%, որտեղ, ի տարբերություն Տավուշի մարզի, վերադարձածների տոկոսը նույնպես բարձր է՝ 5.5%: 2020–2022 թթ. տվյալներով Տավուշի մարզից մեկնած միգրանտների թիվը ընդհանուր բնակչության թվաքանակում կազմել է 4.2%, իսկ վերադարձած միգրանտների թիվը՝ 0.4%: Միգրացիոն նման բացասական ցուցանիշներով հոսքերը որոշ դեպքերում պայմանավորված են սահմանային իրավիճակների հնարավոր սրացումների վտանգով, իսկ մի շարք դեպքերում էլ աշխատատեղերի բացակայությամբ, բնակչության զբաղվածության ապահովման սահմանափակվածությամբ[20]:

ՀՀ մարզերի ներդրումային գրավչության գնահատման տեսանկյունից կարևոր ցուցիչ են նաև մարզերում արտադրական թափոնների քանակական ցուցանիշները: Ելնելով աղյուսակ 5-ի տվյալներից՝ նկատելի է, որ արտադրական թափոնների ծավալը և տվյալ մարզում արդյունաբերության զարգացման մակարդակը ուղիղ համեմատական են: Դա խնդրահարույց է ներդրումային որոշումների և տնտեսության ոլորտների բազմազանեցման տեսանկյունից:

Աղյուսակ 5

ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում առաջացած արտադրական թափոնների բացարձակ և հարաբերական ցուցանիշները (2022 թ. տվյալներ)[21]

Մարզ	*Ընդամենը, տ*	*Մեկ բնակչի հաշվով, կգ*	*Մեկ կմ² հաշվով, կգ*
ՀՀ	79,088,060.3	26,635.7	2,778,519.3
Սյունիք	48,992,824.5	363,872.1	10,874,245.2
Տավուշ	3,449.8	28.8	1,275.8

Մարզերում երկարաժամկետ և կայուն զարգացում ապահովելու, հետևապես՝ ներդրումների համար ավելի գրավիչ ուղղություն դառնալու ճանապարհին կարևոր է մարդկային կապիտալի զարգացումը և պահպանումը:

[20] Տե՛ս Միգրացիոն պատկերը ՀՀ-ում, 2022 թ., էջ 10, https://armstat.am/file/article/migration_profile_am_2022.pdf

[21] ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, https://armstat.am/file/article/marzer_2023_16.pdf

Այնուամենայնիվ, ՀՀ-ում բնապահպանական ռիսկերի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է հենց Սյունիքի մարզում, որը պայմանավորված է մարզի տնտեսության ճյուղային կառուցվածքով, մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության աճով, որից և բխող արտադրական թափոնների աննախադեպ ծավալով: Վերջինիս ցուցանիշով մարզի մեկ բնակչի հաշվով ծավալը գերազանցում է ՀՀ մեկ շնչի հաշվով ցուցանիշը գրեթե 14 անգամ, իսկ մեկ քառակուսի մետրի հաշվով՝ գրեթե 4 անգամ: Սա լուրջ սպառնալիք է մարզում գյուղատնտեսության զարգացման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն փաստը, որ բերքատվության ցուցանիշներով ևս մարզը շոշափելի արդյունքներ չի արձանագրել:

ՀՀ մարզերում ներդրումային գրավչության գնահատման SVOT վերլուծության հիմնական արդյունքներ: ՀՀ մարզերի ներդրումային գրավչության հիմնական ուղղությունները պատկերացնելու համար *SVOT վերլուծության* միջոցով նախանշվել են ներդրումների ներգրավմանը նպաստող արտաքին և ներքին միջավայրի հիմնական գործոնները: SVOT գործիքակազմի միջոցով որակական գնահատումներ են իրականացվել ընտրված մարզերում ներդրումային հնարավորությունները բացահայտելու նպատակով: Հարկ է նշել նաև, որ վերլուծության ընթացքում մարզերի SVOT-ն ուսումնասիրելիս դրանք միավորվել են՝ ըստ աշխարհագրական մերձության, լոգիստիկ հնարավորությունների նախադրյալների, ինչպես նաև ներդրումների ներգրավման համանման մեկնարկային պայմանների: Դա թույլ է տվել առաջարկներում ընտրված մարզերում իրականացվելիք առաջարկները դիտարկել մյուս մարզերի հետ համագործակցության շրջանակներում:

Աղյուսակ 6

ՀՀ Սյունիքի մարզի ներդրումային գրավչության գնահատում. SVOT վերլուծության հիմնական արդյունքներ

Ուժեղ կողմ	*Թույլ կողմ*	*Հնարավորություն*	*Սպառնալիք*
• Տնտեսության մեջ արտահանող ճյուղերի առկայություն և արտահանման բարձր մակարդակ: • ՀՀ մարզերի նկատմամբ մեկ շնչի հաշվով ՀՆԱ ամենաբարձր մակարդակ: • Հանրապետական միջինից բարձր զբաղվածության մակարդակ: • Աղքատության ցածր մակարդակ[22]: • Հանրապետական միջինից բարձր զբաղվածության մակարդակ: • Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների առկայություն (ընդհանուր տարածքի 68,12%-ը):	• ՀՆԱ զգալի կախվածություն արդյունաբերության մեկ՝ լեռնահանքային արդյունաբերության ճյուղից: • Լեռնահանքային արդյունաբերական արտադրանքի միջազգային գների անկայուն դինամիկա և նվազման միտումներ: • Գյուղատնտեսության վարում ավանդական եղանակով (օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածության բարձր աստիճան): • Գյուղատնտեսական հողերի ոչ ամբողջ ծավալով օգտագործում:	• Տնտեսության մեջ արտահանող ճյուղերի առկայություն և արտահանման բարձր մակարդակ՝ նոր ճյուղերի խթանմամբ: • Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ համակցված բնապահպանության հետ: • Մրցունակ և բազմազանեցված արդյունաբերություն (վերականգնվող էներգիայի արտադրություն, թեթև արդյունաբե-	• Սահմանային լարվածության հնարավոր սրացում: • Կրթական համակարգի և աշխատաշուկայի պահանջարկի միջև աճող անհամապատասխանություն: • Երկրաշարժերի դեպքում պոչամբարներից և արտադրություններից թունավոր նյութերի՝ շրջակա միջավայր թափանցելու վտանգ:

[22] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Տնային տնտեսությունների հետազոտություն, https://armstat.am/file/article/marzer_2023_17.pdf

• Գյուղմթերքների վերամշակման և թեթև արդյունաբերության զարգացման մեծ ներուժի առկայություն: • Զբոսաշրջային գրավչություն ունեցող բնական և արդյունաբերական լանդշաֆտների, ինչպես նաև բազմաթիվ բնական հուշարձանների առկայություն: • Պետական խթանող քաղաքականության առկայություն զբաղվածության համար[23]: • Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն: • ՏՏ ոլորտի խթանման ազգային կրթական քաղաքականության առկայություն[24]: • Հարուստ ջրային ռեսուրսների առկայություն: • Հարուստ բնական պայմաններ, գրեթե բոլոր կլիմայական գոտիների առկայություն: • Զարգացած հիդրոէներգետիկ ենթակառուցվածքներ: • Բազմաթիվ ՀԷԿ-երի առկայություն և վերականգնվող էներգիայի արտադրություն (օրինակ՝ Քաջարան քաղաքը): • Պետության կողմից որդեգրած կոշտ կենցաղային թափոնների կառավարման ռազմավարություն[25]: • Կապանի օդանավակայանի առկայություն:	• Ուղևորա- և բեռնափոխադրումների կախվածությունը միայն մեկ տեսակի՝ ավտոմոբիլային տրանսպորտից: • Թույլ զարգացած հանրային տրանսպորտային ծառայություններ, ինչպես նաև ճանապարհների ոչ բավարար նորոգվածության մակարդակ: • Բարձրագույն կրթություն ունեցողների արտահոսք: • Բժշկական ծառայությունների ոլորտում կադրերի պակաս, ինչպես նաև մայրաքաղաքի բժշկական ծառայությունների սահմանափակ հասանելիություն: • Վնասված բազմաբնակարան շենքերի վերականգնման կամ վերաբնակեցման ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման բացակայություն: • Գյուղական համայնքներում խմելու և ոռոգման (կոյուղու) համակարգի բացակայություն: • Հակակարկտային կայանների բացակայություն: • Պոչամբարների առկայություն և դրանց ծավալների շարունակական աճ: • Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության արևային և հողմային ցածր մակարդակ: • Սեյսմիկ գոտի՝ սողանքային երևույթների առկայությամբ: • Ձմեռային ամիսներին ճանապարհների դժվար անցանելիություն:	ության զարգացման համար մեծ ներդրուժի և նախադրյալների առկայություն): • Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումների ներգրավում: • Հյուսիս-հարավ ճանապարհի տնտեսական նշանակության ընդլայնում: • Մեղրիում ազատ տնտեսական գոտու գործունեության լավարկում: • Շրջանաձև տնտեսության սկզբունքներին համահունչ կառավարում: Արդյունաբերական թափոնների կառավարման մեխանիզմների մշակում և ներդրում մարզի հնգամյա զարգացման ծրագրերում:	• Լեռնահանքային արդյունաբերական արտադրանքի միջազգային գների անկայուն դինամիկա և նվազման միտումներ: • Գյուղատնտեսության զարգացման թուլացում՝ ի հաշիվ բնապահպանական առկա խնդիրների, ինչպես նաև արոտավայրերի, այգիների կորստի: • Բնակչության առողջապահական ցուցանիշների վատթարացում՝ կապված բնապահպանական ոլորտի առկա ռիսկերի, ինչպես նաև առողջության համար առավել վտանգավոր աշխատանքային պայմանների հետ:

[23] ՀՀ Կառավարության 27.03.2014 թ. N 442-Ն որոշում՝ ՀՀ 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով, arlis.am/DocumentView.aspx?docID=156365, 1322.pdf (gov.am)

[24] ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած թիվ 29 արձանագրային որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=86050

[25] ՀՀ 2017–2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն, https://www.irtek.am/views/act.aspx?aid=88196

Սյունիքի մարզը որակական գնահատումների արդյունքում դիտարկվում է որպես ներդրումային բարձր գրավչություն ունեցող մարզ, որը երևում է ոչ միայն ՀՀ-ում ունեցած ամենաբարձր արտադրական ներուժով, այլ նաև ինստիտուցիոնալ և ֆինանսական ներուժի, ինչպես նաև ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի մեծ ծավալով: Մարզն ունի բարձր տնտեսական հնարավորություններ և արտադրական ներուժ՝ ի հաշիվ բնակլիմայական բարենպաստ պայմանների, տեղադիրքի և բնական ռեսուրսների, ինչը հնարավորություն է ստեղծում բազմազանեցնելու տնտեսական գործունեության ոլորտները մինչև գյուղատնտեսություն ու զբոսաշրջություն: Այնուամենայնիվ, մարզի տնտեսությունը խոշորագույն կախման մեջ է գտնվում հանքարդյունաբերությունից, որը հանգեցրել է մարզում տնտեսական ռիսկերի բարձրացման՝ միաժամանակ հանգեցնելով գործունեության մյուս ոլորտներում (հատկապես՝ գյուղատնտեսության) հետընթացի: Որքան էլ մարզում արդյունաբերության ոլորտը՝ ի դեմս հանքարդյունաբերության ոլորտի, զարգացած է ու մրցակցային, այնուամենայնիվ, այն տարեցտարի առաջ է բերել բնապահպանական, ինչպես նաև առողջապահական լուրջ հիմնախնդիրներ:

Հաշվի առնելով հանքարդյունաբերության՝ արտահանման միտված լինելու հանգամանքը՝ հարկ ենք համարում նաև նշել այն ռիսկի մասին, որը պայմանավորված է միջազգային շուկաներում հնարավոր անկայունությամբ: Նշյալ անկայունության և բնական ռեսուրսների անխնա օգտագործման կանխարգելումը հենց շրջանաձև տնտեսության ստեղծման հիմքում է, որը այս մարզում անհրաժեշտություն է հատկապես այն դեպքում, երբ մարզը, ի հաշիվ արտահանման մեծ ներուժի, ունի օտարերկրյա ներդրումներ ներգրավելու բարձր հնարավորություններ: Հանքարդյունաբերությանը զուգահեռ, մարզում աճի հնարավորություններ են դրսևորվում նաև էլեկտրամատակարարման ոլորտում, երբ ակտիվ գործում են մի շարք հիդրոէլեկտրակայաններ և վերականգնվող էներգիայի կայաններ: Հանքարդյունաբերության զարգացումը շղթայաբար հանգեցրել է նաև շինարարության ոլորտում գործունեություն իրականացնող և շինանյութի վաճառքով զբաղվող կազմակերպությունների շրջանառության ծավալների մեծացման:

Սպառման հնարավորությունների բարձր մակարդակը, որն արտահայտվում է ինչպես աղքատության ցածր մակարդակով, այնպես էլ զբաղվածության բարձր մակարդակով, հանգեցրել է մարդկային կապիտալի զարգացման և այդ զարգացումն ապահովող միջոցների ստեղծման, սակայն, այդքանով հանդերձ, մարզում նկատելի է մարդկային կապիտալի արտահոսք դեպի մայրաքաղաք Երևան կամ արտերկիր: Սպառման հնարավորությունների աճը հանգեցրել է մանրամեծածախ առևտրով և ուղևորափոխադրումներով զբաղվող կազմակերպությունների շրջանառության ծավալների բարձր մակարդակի: Սակայն այս աճող ոլորտի հնարավորությունները սահմանափակվում են ոչ այնքան զարգացած ենթակառուցվածքներով: Հիմնական խնդիր է այն, որ ուղևորա- և բեռնափոխադրումները մեծ մասամբ իրականացվում են միայն ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով, որի դեպքում ճանապարհների ոչ բավարար նորոգվածությունը ու հատկապես ձմռան ամիսների դժվար հասանելիությունը սահմանափակում են առկա հնարավորությունները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Սյունիքի մարզում ևս ներկայումս կան ընթացիկ ներդրումային ծրագրեր, որոնք հիմնականում զբոսաշրջության ոլորտում

են, մասնավորապես՝ հյուրանոցային համալիրի կառուցում, հյուրատների, թենիսի խաղահրապարակի և ընկույզի այգիների հիմնում, Սիսիան համայնքի Վաղատին բնակավայրի տարածքում «Որոտնաբերդ» արհեստի, արվեստի, կրթության, զբոսաշրջության բազմաֆունկցիոնալ համալիրի ստեղծում:

Աղյուսակ 7

ՀՀ Տավուշի մարզի ներդրումային գրավչության գնահատում. SVOT վերլուծության հիմնական արդյունքներ

Ուժեղ կողմ	*Թույլ կողմ*	*Հնարավորություն*	*Սպառնալիք*
• Մշակող արդյունաբերության բարձր տեսակարար կշիռ արդյունաբերական արտադրանքում՝ 86.2%[26]: • Գյուղատնտեսական նշանակության հողերի (սևահողերի) առկայություն: • «Իջևան» հանքային ջրերի և «Դիլի» ՍՊԸ անասնապահական գործարանների, ինչպես նաև պանրի արտադրության առկայություն: • «ԱԿՈԼ ՍՊԸ ՀՆՁԱՆ» ապրանքանիշի առկայություն, որը զբաղվում է մրգային օղու, խնձորի բնական հյութի արտադրությամբ: • Մետաղային և ոչ մետաղային հանքավայրերի առկայություն: • Քարի վերամշակմամբ զբաղվող «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ առկայություն[27]:	• Աղքատության ՀՀ հանրապետական միջինից բարձր մակարդակ՝ 38.4%[28]: • Գործազրկության բարձր մակարդակ՝ 20.7%[29]: • Գյուղատնտեսության մեջ ոչ ֆորմալ զբաղվածների բարձր տոկոս՝ 91.5%[30]: • Բերքատվության ցածր մակարդակ՝ ոչ բարենպաստ կլիմայական պայմանների պատճառով: • Գյուղմթերքի արտադրության դժվարություններ՝ կապված ոռոգման ջրի պակասի հետ (խնդիրներ կոյուղու համակարգի հետ կապված): • Գյուղատնտեսական տեխնիկայի սակավություն: • Առողջապահական ծառայությունների ոչ բարձր որակ: • Առևտրի և սպասարկման ցածր որակ: • Քաղաքների բրենդավորման ռազմավարության բացակայություն: • Փողոցների մաքրման վատ վիճակ:	• Ինտենսիվ գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության փոխգործակցություն (խելացի անասնագոմ): • Գինեգործության զարգացում (այդ թվում՝ գինու բրենդավորում): • Դիլիջանը որպես տարածաշրջանային ֆինանսական կենտրոն՝ ՀՀ ԿԲ ուսումնահետազոտական կենտրոնի առկայությամբ պայմանավորված: • Միջազգային կրթագիտական համալիրի ստեղծում (Դիլիջանի միջազգային դպրոցի օրինակով): • Առողջարանային, ընտանեկան զբոսաշրջության զարգացում[31]: • Մշակութային և պատմական զբո-	• Սահմանային լարվածության սրացում: • Սեյսմիկ վտանգներ և սողանքներ: • Արոտավայրերի, այգիների կորուստ: • Գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտի ռեսուրսների սակավություն: • Աճող արտագաղթ և մարզի հետ ապագայի հեռանկարների բացակայություն երիտասարդների շրջանում (որպես հետևանք՝ համապատասխան և անհրաժեշտ մարդկային կապիտալի բացակայություն): • ՏԻՄ-երի մասնագիտացման ցածր մակարդակ: • Պետական աջակցության ծրագրերի ցածր արդյունավետություն և / կամ բացակայություն:

[26] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, Արդյունաբերություն, https://www.armstat.am/file/article/marzer_2023_6.pdf

[27] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կայքէջ, Համայնքներ, համայնքների զարգացման ծրագրեր, Իջևան համայնքի 2017–2021 թթ., http://tavush.mtad.am/zargacum/

[28] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, Տնային տնտեսությունների հետազոտություն, https://www.armstat.am/file/article/marzer_2023_17.pdf

[29] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, Աշխատանքի շուկա, https://www.armstat.am/file/article/marzer_2023_12.pdf

[30] Նույն աղբյուրը, էջ 7:

[31] Mountain Village, https://mountainvillage.am/en/terraces

• Առողջարանների, հանգստյան տների, հյուրատների գործունեություն: • Ֆինանսական ոլորտի սպասարկման ծառայությունների զարգացվածություն, բանկերի մասնաճյուղերի բացում:	• Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների սակավություն: • Ենթակառուցվածքների անմխիթար վիճակ (այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտում): • Թիրախային ոլորտային ռազմավարությունների բացակայություն: • Կիսակառույց ճոպանուղու առկայություն: • Վթարավտանգ իրավիճակ միջպետական մայրուղի հանդիսացող հատվածում:	սաշրջության զարգացում և ճանաչելիության աստիճանի բարձրացում: • Այլընտրանքային էներգետիկայի, մասնավորապես՝ հիդրոէլեկտրակայանների և արևային կայանների գործարկում:	

Տավուշի մարզը որակական գնահատումների արդյունքում դիտարկվում է որպես օգտակար հանածոներով ոչ այդքան հարուստ մարզ: Մարզն առաջատար է նաև աղքատության և գործազրկության մակարդակներով: Արտադրական ներուժով մարզը հետնապահի դիրքում է: Մարզի ներդրումային գրավչությանը սպառնացող կարևորագույն հիմնախնդիրներից մեկը ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակն է, ինչն ուղեկցվում է նաև սահմանային հնարավոր սրացման ռիսկերով, մարզի համայնքների անհամաչափ զարգացմամբ, սեյսմիկ վտանգներով, սողանքներով:

Մարզում առկա են գյուղատնտեսական նշանակության սևահողեր, ինչը գյուղատնտեսությամբ և դրա հիման վրա մշակող արդյունաբերությամբ զբաղվելու գրավչությունը բավականաչափ մեծացնում է: Դրանով պայմանավորված՝ այստեղ արդյունավետ գործունեություն են ծավալում ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և արտահանմամբ զբաղվող կազմակերպություններ: Այնուամենայնիվ, մարզում առկա են այդ ոլորտի հետ կապված մի շարք հիմնախնդիրներ՝ բերքատվության ցածր մակարդակ (ի հաշիվ ոչ բարենպաստ կլիմայական պայմանների), ոռոգման ցանցի խնդիրներ և գյուղատնտեսական տեխնիկայի սակավություն: Նշյալ խնդիրները բացահայտում են նաև ենթակառուցվածքային ցածր հնարավորությունները, ինչը էական խոչընդոտ է ներդրումներ ներգրավելու համատեքստում: Մարզը ակտիվորեն չի օգտագործում առկա զբոսաշրջային հնարավորությունները, որոնք կարող են արտահայտվել առողջարանային ու պատմամշակութային զբոսաշրջության զարգացմամբ: Առողջապահական ծառայությունների ցածր որակը և անվտանգային ռիսկերը հանգեցնում են ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների ձևավորման:

Մարզում զարգացած են մշակող արդյունաբերության որոշ ուղղություններ, ինչպիսիք են քարի մշակումը կամ տեքստիլ արտադրությունը:

Հետաքրքրական է, որ մարզում աղքատության և գործազրկության բարձր մակարդակը ուղեկցվում է սպառման միջինից բարձր հնարավորություններով, սակայն վերջինս չի հանգեցնում տնտեսական ներուժի մեծացման կամ տնտեսական բարձր ռիսկերի նվազման: Սպառման հնարավորություններն ուղեկցվում են մարդկային կապիտալի բարձր գնահատականով,

որին նպաստում է կրթական ենթակառուցվածքներում առանձին հաստատությունների առկայությունը: Ի հաշիվ մարդկային կապիտալի զարգացման՝ մարզում զարգացած է նաև ինստիտուցիոնալ և ֆինանսական ներուժը, ինչը կարող է էականորեն նպաստել ներդրումային գրավչության բարելավմանը:

Հարկ է նշել, որ Տավուշի մարզն աչքի է ընկնում ներդրումային ծրագրերի քանակով: Այստեղ հիմնականում մեկնարկած և ընթացիկ ներդրումային ծրագրերը զբոսաշրջության և կառուցապատման ոլորտներում են, որտեղ հիմնական ներդրումները ուղղված են հյուրանոցային համալիրների կառուցմանը (Դիլիջան համայնքում «Լա Վալետտ Ռեզորթ», «Կանտար Դիլիջան» և այլն):

Ինչպես երևում է աղյուսակ 8-ի տվյալներից, դիտարկված մարզերն աչքի են ընկնում հյուրանոցային տնտեսության օբյեկտների և զբոսաշրջության ոլորտի հասույթի ցուցանիշներով:

Աղյուսակ 8

ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում զբոսաշրջության ոլորտի վիճակագրությունը (2022 թ. տվյալների վերլուծություն՝ համադրած 2018 թ. տվյալների հետ)[32]

Մարզ/ցուցանիշ	*Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ*		*Հասույթ*	
	Թիվ, հատ	*Աճը 2018 թ. համեմատությամբ (%)*	*Ընդհանուր չափ, մլն դրամ*	*Աճը 2018 թ. համեմատությամբ (%)*
Սյունիք	47	*27*	630.1	*0.1*
Տավուշ	87	*34*	2949.5	*170*

Հարկ է նշել նաև, որ իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած դիտարկվող մարզերն ունեն զբոսաշրջության զարգացման բավականին մեծ ներուժ, սակայն որոշ դեպքերում ենթակառուցվածքների բացակայությունը և ոչ բավարար մարքեթինգային միջոցառումները թույլ չեն տալիս առավել ներկայանալի դարձնել զբոսաշրջային ռեսուրսները:

Այնուամենայնիվ, ներդրումների ներգրավման հնարավորությունները հաշվի առնելով, զբոսաշրջության զարգացման կարևոր ուղղություն կարող է դիտարկվել զբոսաշրջիկների բաշխվածության բազմազանեցումը:

Եզրակացություններ: Հետազոտության շրջանակներում իրականացված վերլուծության արդյունքները թույլ տվեցին բացահայտել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են ՀՀ մարզերում ներդրումների ներգրավման առումով: Դրանք տարաբնույթ են՝ սկսած համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունից մինչև բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պակաս, ինչպես նաև մարզերում ներդրումային քաղաքականության մշակման և կենսագործման հստակ գործիքակազմերի բացակայություն:

[32] ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023 թվական, Զբոսաշրջության ոլորտ, https://armstat.am/file/article/marzer_2023_18.pdf

ՀՀ Սյունիքի մարզ: Առաջարկներ ըստ ոլորտների.

Հանքարդյունաբերություն

- Բազմազանեցնել տնտեսությունը գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման միջոցով: Հաշվի առնելով մարզի ներուժը՝ կենտրոնանալ ագրոբիզնեսի զարգացման վրա՝ դա դիտարկելով որպես հանքարդյունաբերության զարգացմանը լրացնող ոլորտ:
- Մշակել ագրոզբոսաշրջության ոլորտի զարգացման առաջարկներ՝ նպաստելով հողի արդյունավետ օգտագործմանը, մարդկային կապիտալի որակավորման բարձրացմանն ու ներգրավմանը զբոսաշրջության ոլորտում:
- Մարզում խթանել «շրջանաձև» տնտեսության զարգացման փորձը: Մասնավորապես՝ իրականացնել շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ոլորտի ազդեցության պարբերական ստուգումներ:
- Մշակել թափոնների ծավալների կրճատման տեղական ռազմավարություններ: Խթանել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումն այս ոլորտում:
- Ստեղծել յուրահատուկ խթաններ մարզում գործող և ապագայում ստեղծվող այն ընկերությունների համար, որոնց գործունեությունը առավելապես միտված կլինի շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Էլեկտրամատակարարում և շինարարություն

- Մշակել սոցիալական երաշխիքների ապահովման համակարգ այն ընկերությունների համար, որոնք էներգետիկայի ոլորտում առաջնորդվում են կայուն կառավարման սկզբունքներին համընթաց և հետևում են էկոլոգիապես մաքուր գործելակերպին:
- Նպաստել հանքարդյունաբերության և էներգիայի ոլորտների ընկերությունների համագործակցությանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու հանքարդյունաբերության ոլորտի բացասական հետևանքները շրջակա միջավայրի վրա:

Սպառման հնարավորություններ և մարդկային կապիտալ

- Տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում, այդ թվում՝ ձմեռային տրանսպորտային ենթակառուցվածքների ապահովում:
- Մարզի ենթակառուցվածքներում ներդրումներ իրականացնող ընկերությունների համար մշակել առանձնահատուկ խթաններ, օրինակ՝ հարկային արտոնություններ, դրամաշնորհներ և այլն:
- Բարելավել և նպաստել մարդկային կապիտալի կարողությունների բարձրացմանը՝ ոչ ֆորմալ կրթության միջոցով կենտրոնանալով տրանսպորտի, ենթակառուցվածքների և մանրածախ առևտրի ոլորտներում զարգացում ապահովելու համար անհրաժեշտ հմտությունների վրա:

ՀՀ Տավուշի մարզ: Առաջարկներ ըստ ոլորտների.

Գյուղատնտեսություն և զբոսաշրջություն

- Արդիականացնել ոռոգման ցանցը՝ ապահովելով մշտական ջրամատակարարում բոլոր համայնքներում:
- Պետական, մարզային կամ համայնքային մակարդակով իրականացնել գյուղատնտեսական տեխնիկայի գնման սուբսիդավորման ծրագ-

րեր, որոնց միջոցով ֆերմերները հնարավորություն կունենան համեմատաբար մատչելի պայմաններով ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա:

- Համագործակցության հաստատում գյուղատնտեսական գիտահետազոտական կազմակերպությունների հետ, որի արդյունքում հնարավոր կլինի մշակաբույսերի աճեցման արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել հնարավորինս բարձր բերքատվություն:
- Զբոսաշրջության զարգացման խթանում՝ տեղի բնակիչներին՝ որպես էքսկուրսավարների ուսուցանելու, բարձրորակ մարքեթինգային քաղաքականություն իրականացնելու միջոցով, ինչպես նաև մարզում առողջարանային և պատմական զբոսաշրջային ռեսուրսների ներուժի օգտագործմամբ նոր զբոսաշրջային առաջարկների մշակում:

Մշակող արդյունաբերություն և շինարարություն

- Նորարարական մոտեցումների կիրառում քարերի մշակմամբ զբաղվող ընկերություններում՝ որպես արժեքային առաջարկ ներկայացնելով բարձորակ քարե կտորները, ինչպես նաև դրանց դետալները կահույքագործության մեջ և այլն:
- **Տեքստիլ արտադրության բրենդավորում՝** շեշտադրում կատարելով տեղական բրենդի, բարձորակ հումքի վրա:

Սպառման ծավալներ և մարդկային կապիտալ

- Իրականացնել երիտասարդների զբաղվածության խթանման ծրագրեր՝ համագործակցելով տեղի կրթական հաստատությունների հետ: Իրականացնել փորձառության ծրագրեր գյուղատնտեսության, տեքստիլ արտադրության, շինարարության, զբոսաշրջության ոլորտների կազմակերպություններում:
- Իրականացնել վերապատրաստման ծրագրեր այն ոլորտներում, որոնց մասով մարզն ունի զարգացման իրական ներուժ, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, բիզնեսի կառավարման բնագավառներում:
- Տեղական արտադրանքի իրացման համար նախատեսված տեղական շուկաների խթանում՝ նպաստելով տեղական արտադրանքի (այդ թվում՝ գյուղատնտեսական) իրացման աճին: Այսկերպ կբարձրանա նաև տեղական արտադրողների արտադրանքի ճանաչելիության աստիճանը:

Այսպիսով՝ իրականացված վերլուծության արդյունքները նախանշում են ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի ներդրումային գրավչության հիմնական նկարագրերը և դրանցից բխող առաջարկները, որոնք կարող են գործնական կիրառություն ունենալ հետևողական և պլանավորված աշխատանքի արդյունքում: Թեև ներկայացված առաջարկները բխում են որոշակի մարզերում իրականացված վերլուծության արդյունքներից, դրանք կարող են արդյունավետ կիրառություն ունենալ ՀՀ մնացյալ մարզերում ներդրումային գրավչության բարելավմանը միտված գործողությունների իրականացման փուլում:

Օգտագործված գրականություն

1. Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Ի.Տ. Տիգրանյան, կատարողներ՝ Ք.Ջ. Վարդանյան, Գ.Ա. Ավագյան, Կ.Հ. Գրիգորյան, Վ.Ի. Տիգրանյան, Եր., «Տնտեսագետ», 2014, 80 էջ, https://asue.am/upload/files/ner-git_dram_Tigranyan.pdf
2. ՀՀ 2017–2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն, https://www.irtek.am/views/act.aspx?aid=88196
3. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը/ Զ. Թադևոսյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2020, 193 էջ («Ամբերդ» մատենաշար), https://library.asue.am/open/Amberd_lori.pdf?fbclid=IwAR3nDwavM8Yohk-kAZMGv9jm5TYQml_Ok3ZtjGSv7OwVrQVwV-PmuRZCWhQ
4. ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած թիվ 29 արձանագրային որոշում, https://www.irtek.am/views/act.aspx?aid=86050
5. ՀՀ Կառավարության 27.03.2014 թ. N 442-Ն որոշում. ՀՀ 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր՝ Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով, arlis.am/DocumentView.aspx?docID=156365, 1322.pdf (gov.am)
6. ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համալիր զարգացման տեսլականը / Ս. Խաչիկյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2022, 94 էջ («Ամբերդ» մատենաշար - 58, https://www.researchgate.net/profile/Armen-Ghazaryan-3/publication/385909964_Amberd-58pdf/data/673b7cddb903016a31c3d036/Amberd-58.pdf?origin=scientificContributions
7. ՀՀ ՎԿ կայքէջ, Տնային տնտեսությունների հետազոտություն, https://armstat.am/file/article/marzer_2023_17.pdf
8. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023https://armstat.am/file/article/marzer_2023_6.pdf
9. ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, https://armstat.am/file/article/marzer_2023_16.pdf
10. ՀՀ ՎԿ կայքէջ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, Աշխատանքի շուկա, https://www.armstat.am/file/article/marzer_2023_12.pdf
11. ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023, Արդյունաբերություն, https://www.armstat.am/file/article/marzer_2023_6.pdf
12. ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2023 թվական, Զբոսաշրջության ոլորտ, https://armstat.am/file/article/marzer_2023_18.pdf
13. ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրություն / Տվյալների բազաներ / Վիճակագրական տվյալների բազաներ / Ժողովրդագրական տվյալների բազա, https://armstat.am/am/?nid=209

14. ՀՀ ՎԿ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf
15. ՀՀ ՎԿ, Ժողովրդագրական տվյալների բազա, ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները, 2022–2023 թթ., https://armstat.am/am/?nid=209
16. ՀՀ ՎԿ, Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Գյուղատնտեսության ոլորտ, https://armstat.am/file/article/marzer_2023_7.pdf, Շինարարության ոլորտ, https://armstat.am/file/article/marzer_2023_8.pdf, Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/file/article/marzer_2023_10.pdf
17. ՀՀ ՎԿ, Միգրացիոն պատկերը ՀՀ-ում, 2022 թ., էջ 10, https://armstat.am/file/article/migration_profile_am_2022.pdf
18. ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կայքէջ, Համայնքներ, համայնքների զարգացման ծրագրեր, Իջևան համայնքի 2017–2021 թվականների, http://tavush.mtad.am/zargacum/
19. Էդգար Աղաբեկյան, Ընկերությունների շահույթն ու վնասը, կամ թե ինչն է խանգարում օտարերկրյա ներդրողներին ներդնել Հայաստանում, ՀՊՏՀ, «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Վերլուծականներ, https://asue.am/amberd/publications/analytics/profit-loss-companies-prevents-foreign-investors
20. Ներդրումային օրենսդրություն, ENTERPRISE ARMENIA, https://enterprisearmenia.am/hy/why-armenia/investment-legislation/
21. Адрианов Д.В., Россия: экономический и инвестиционный потенциал. М., «Экономика», 2015.
22. Сущность инвестиционной привлекательности как экономической категории (О некоторых вопросах и проблемах экономики и менеджмента, Дмитриева О.В./ Сборник научных трудов по итогам международной научно-практической конференции. № 3 г. Красноярск, 2016. 264 с.).
23. Bevan A., Estrin S. (2004). The Determinants of Foreign Direct Investment into European Transition Economies. Journal of Comparative Economics, 32(4), 775-787, https://www.researchgate.net/publication/222702806_The_Determinants_of_Foreign_Direct_Investment_into_European_Transition_Economies
24. Campos N. F., Kinoshita Y. (2003). Why Does FDI Go Where it Goes? New Evidence from the Transition Economies. IMF Working Paper, https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2016/12/30/Why-Does-Fdi-Go-Where-it-Goes-New-Evidence-From-the-Transition-Economies-16954
25. Clark D. P., Highfill J., De O., Campino J., Rehman S. S. (2011). FDI, technology spillovers, growth, and income inequality: A selective survey. Global Economy Journal, 11(2), 1-44, https://doi.org/10.2202/1524-5861.1773
26. Maskus K. E. (2000). Intellectual Property Rights and Foreign Direct Investment, Centre for International Economic Studies Working Paper, No. 22, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=231122

27. Mountain Village, https://mountainvillage.am/en/terraces
28. Crespo N., Fontoura M. P. , Determinant Factors of FDI Spillovers – What Do We Really Know?, 2007, Volume 35, Issue 3, March 2007, Pages 410-425, https://doi.org/10.1016/j.worlddev.2006.04.001
29. Urata S., Kiyota K. (2003). Entry of Foreign Firms and Productivity Growth: Evidence from Japanese Microdata. Review of International Economics, 11(2), 221-236, https://www.researchgate.net/publication/254412735_Entry_of_Foreign_Multinational_Firms_and_Productivity_Growth_of_Domestic_Firms_The_case_of_Japanese_firms

АМАЗАСП ГАЛСТЯН
Старший научный сотрудник исследовательского центра «Амберд» АГЭУ, кандидат экономических наук

МГЕР ШАГИНЯН
Руководитель отдела развития экономических зон и инфраструктуры управления промышленной политики Министерства экономики РА

КАТРИН ЦАТРЯН
Магистрант АГЭУ

ГРЕТА ГУРУРЯН
Магистрант АГЭУ

Основные препятствия и возможности привлечения инвестиций в регионах Армении (на примере Сюникской и Тавушской областей).– Оценка инвестиционной привлекательности территориальных единиц является основой для разработки эффективной политики и программ, направленных на её улучшение. Важно выявить препятствия, влияющие на инвестиционную привлекательность, чтобы формировать действенные стратегии. В контексте реализации инвестиционной политики Армении необходимо проводить такие оценки для каждого региона страны.

В данном анализе оцениваются инвестиционные условия в Сюникской и Тавушской областях Армении. На основе анализа предложены пути повышения инвестиционной привлекательности для каждого региона. Эти пути сформулированы на основе описания текущих условий и ключевых факторов, влияющих на инвестиционную привлекательность, таких как инфраструктура, социально-экономические показатели и управление. Регионы описаны с учётом специфики их потенциала, а также предложены рекомендации, направленные на улучшение инвестиционного климата.

Ключевые слова: *инвестиционная привлекательность, регионы, социально-экономические показатели, SWOT-анализ, пути улучшения*
JEL: O18, P25, R58
DOI: 10.52174/29538114_2024.3-123

HAMAZASP GALSTYAN
Senior researcher at Amberd Research Center of ASUE, PhD in Economics

MHER SHAHINYAN
Head of the Division of Development of Economic Zones and Infrastructure of the Industrial Policy Development of the Ministry of Economy of the RA

KATRIN TSATRYAN
ASUE MA Student

GRETA GURURYAN
ASUE MA Student

Main Obstacles and Opportunities for Attracting Investments in the Regions of Armenia: A Case Study of Syunik and Tavush Regions.– The assessment of investment attractiveness in regional units is essential for the development of policies and programs aimed at improving investment appeal. Identifying barriers to investment is crucial for formulating effective strategies. In the context of Armenia's national investment policy, conducting such assessments for each region is necessary to ensure targeted and efficient policy implementation.

This study evaluates the investment attractiveness of the Syunik and Tavush regions of Armenia, focusing on key socio-economic indicators and investment challenges. By synthesizing the findings, the paper proposes tailored pathways to enhance investment attractiveness in these regions. These pathways are based on an analysis of the regions' current investment conditions, with specific recommendations addressing each region's unique strengths and weaknesses. The recommendations are structured around the key factors that shape investment potential, such as infrastructure, socio-economic conditions, and governance.

This study contributes to a better understanding of regional investment dynamics in Armenia and provides actionable insights for improving investment policies in the Syunik and Tavush regions.

Keywords: *investment attractiveness, regions, socio-economic indicators, SWOT analysis, pathways for improvement*
JEL: O18, P25, R58
DOI: 10.52174/29538114_2024.3-123